

ԳՈՒՐԳԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՎՊՄՀ

**ԱԶՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՒ ՈՒՂԵԿՑՈՂ ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԿԱՄԵՆԻՑԻ ՅԱՅԿԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԺՁ. ԴԱՐ)**

Սկիզբը՝ նախորդիվ

Գ. Բացահայտիչ—բացահայտյալ քերականական հարաբերության սահմաններում անձնանուններին կից կարող են հանդես գալ անձնանիշ գոյականների հետ կապակցելիության հնարավորությամբ օժտված՝ ա) հասարակ անուններ, բ) դերանուններ, գ) փոխանուններ, որոնցով բացահայտվում է անձի ով լինելը միջանձնային հարաբերություններում կամ ներանձնային դաշտում: Օրինակ՝ իւր եղբօրն՝ Աբահամին, Սիմոնին կնոջն՝ Կուլաֆին, Վասքո՝ Միշոյին որդին յետ իւր երկան՝ Վարդէրէսին Եօլպէյին, Տօնավանքէն մնացել էր դիսավրյ. թուրքի ձի. զոր ինքն տէր Հանսուն ԼԶ. (36) շաբաթ պահեց եւ խարճեց զայն ձին եւ այժմ սատկեցաւ: Կու խոստանամ ես՝ Սարգիսն վճարել Վարդէրէսին մինչեւ այսմ աւուր տարի մի. նախդ սպիտակով: Ուստի այժմ եկն սօտուցն՝՝ այսինքն է Սեմֆոն:

Զկա սահմանափակում այն հարցում՝ հատուկ անունն է բացահայտվում հասարակով, թե՞ հասարակ անունը՝ անձնանունով: Հմմտ. Եկաւ Գրիգորն եւ Վասիլն՝ Սարգիսին որդիքն եւ Ի յայս աւուր դատաստանին առջեւն եկին Բ. (2) համածին եղբարքն՝ Փիլիպ եւ Աբահամն:

Ասվածի լավագույն վկայությունն է միեւնույն անձնանունների եւ հասարակ անունների՝ մի դեպքում բացահայտչի, մյուս դեպքում՝ բացահայտյալի շարահյուսական գործառույթով հանդես գալը: Հմմտ. Որովին փեսին՝ Գասպարին եւ ԳԳասպարն՝ Որովին փեսան, Ոհանն իլովցի. պարոն Փիլիպին փեսան եւ Ոհանին՝ փեսին պարոն Փիլիպին. Վարդէ՝ Անտրիյին կինն եւ Անտրիյին կինն՝ Վարդէ:

¹ Լեհ.՝ «անձնավորություն, որից գնված է վիճելի առարկան»:

Զկա սահմանափակում նաեւ այն հարցում՝ միջանձնային կապերը շարահյուսական որ հարաբերությամբ կարելի է արտահայտել՝ որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, թե՛ բացահայտիչ-բացահայտյալ: Հմմտ. գրիգորն տէր Պետրոսին (հատկացուցիչ-հատկացյալ) եւ Գրիգորին՝ տէր Պետրոսին որդոյ (բացահայտիչ-բացահայտյալ), Սամուէլեային փեսայ Փիլիպին (որոշիչ-որոշյալ) եւ Փիլիպ՝ Սամուէլային փեսան (բացահայտիչ-բացահայտյալ) եւ այլն:

Նկատվում են բաղադրիչների գործածության հետեւյալ օրինաչափությունները.

1. Եթե բացահայտումը կատարվում է ներանձնային դաշտում, ապա կարող են ձեւավորվել երկանդամ (իմֆն Վարդէ, ես իմֆն, ես՝ Թորոսն), եռանդամ (եւ՝ վերոյգրեալ Հարպետն, եւ՝ Թորոսն Տեմեանիմ, եւ՝ Անտրէյն Վարդէիսին) կամ բազմանդամ (եւ՝ տէր Պապ վոյթս): Արտահայտություններ երկանդամ որոշ կապակցություններ բովանդակությամբ եռանդամ են (երրորդ անդամն արտահայտված է ա եւ ն հոդերի ստացական կիրառությամբ, եւ կարելի է վերականգնել), ինչպես՝ (իմ) էրիկս՝ Տոնականն, (իւր) հարսին Ագիգոնին, (իւր) կնոջն՝ Կաթերինային, (իմ) աղբօրս Եագուպին, (նորա) հարսն Պրոյզն, (իւր) հարսին գովն՝ Ուղեանային եւ այլն:

Ավելին՝ Արձանագրություններում հաճախ գործածվում են բովանդակությամբ եռանդամ այդ կապակցությունների՝ արտահայտությամբ եռանդամ տարբերակները, որոնցում ա, դ եւ ն ստացական հոդերը հավելադրական արժեք ունեն: Օրինակ՝ Վասն ինչի համար արգելել է Յովանէսն զիմ ապրանքս եւ սպիտակս՝ վոյթին հրամանաւն: Ես յանձնեմ իմ քոյրիս՝ Սարային: Զի քն կամաղ մտել ես նարա տունն: Դուն զքո խրեղ ասել². որպէս գիտես. եւ ես այլ կամիմ ընդդէմ քեզի ճուաբ անել: Բայց զի եթէ կամիցես քո տեղդ ուրիշ մարդ դնել որպէս փրօքուրադօր. զի մզտայով զքո բանդ յառաջ տանիցէ նա այնպիսի մարդն չեմք ընդունել քո տեղդ. Եկաւ Սիմա օլախէն զՄէտվէթէյն եւ ճանաչեց Ասվատուրին մոտն տէր Պետրոսին որդոյ Ա. (1) կովմ զի Եագուպն ճշգրտութիւն բերէ՝ որպէս գրական է ոսկիքն նորա մոտն³:

² Ասել բայի ասել բայաձեւը միջինհայերենյան աղբյուրներում մեզ հանդիպած միակ վկայությունն է, որտեղ դրական խոնարհման ապառնի հրամայականի եզակի թիվն արտահայտվել է ժխտական խոնարհման մի՝ ասել ձեւի դրական տարբերակով, այսինքն՝ առանց մի՝ ժխտական մասնիկի:

³ Առհասարակ, հոդերի կիրառության հարցում նկատվող անհետեւողականությունը առկա է անգամ միեւնույն նախադասության մեջ: Ահավասիկ՝ իմ որդիս՝ Քօսդան, վճարել է իմ

2. Եթե կատարվում է միջանձնային հարաբերությունների բացահայտում, ապա ձեւավորվում են եռանդամ (գԳասպարն՝ Որովին փեսան, Սարգիս՝ Քերուշին դուռն) կամ բազմանդամ (Վասքո՝ Միշֆոյին որդին ըռուզ, Պոհտանն՝ Տոնովաֆին որդին իրովցի, Եան՝ Բաֆովցու Բավել Քիսելին փեսան) կապակցություններ:

Եռանդամ բացահայտիչ—բացահայտյալ շարահյուսական կապակցությունները տեսականորեն կարող են արտահայտվել՝

2.1. ա) «(արական անձնանուն + արական անձնանիշ հասարակ անուն) — արական անձնանուն», բ) «(արական անձնանուն + իգական անձնանիշ հասարակ անուն) — իգական անձնանուն», գ) «(իգական անձնանուն + արական անձնանիշ հասարակ անուն) — արական անձնանուն» կամ դ) «(իգական անձնանուն + իգական անձնանիշ հասարակ անուն) — իգական անձնանուն» մասնակաղապարների բերված եւ սրանց հակառակ շարահյուսական տարբերակներով: Օրինակ՝ Բանդէին որդին՝ Ջատիկն, Միխնոն՝ Տոնուշի որդին, Վասքո՝ Միշֆոյին որդին, Փիլիպին՝ Սամուլային փեսին, Սիմոնին կնոջն՝ Կուլաֆին, Քրասնա՝ Մոսրուպին կինն եւ այլն: Նկատենք, սակայն, որ Արձանագրություններում վերջին երկու մասնակաղապարներով գործածության լեզվական փաստեր չեն հանդիպում: Տարակույս չկա, որ նշված հանգամանքն անմիջականորեն կապ ունի հանրության սեռային պատկերացումների եւ ընկալումների հետ:

Նայած շարահյուսությանը՝ նշված մասնակաղապարների բացահայտիչ կամ բացահայտյալ բաղադրիչը պարտադիր արտահայտվում է հատկացուցիչ⁴ հատկացյալ համեմատաբար կայուն կապակցությամբ: Վերջինիս կազմում հատկացյալի դերով կարող են հանդես գալ այր, ամեւ, ամեւնագ, դայեկ, դուստր, եղբայր/աղբաւ, թոր/դոր, էրիկ, ընկեր, ծառա, հարս, մանչ, որդի, տղա, փեսա, քույր եւ անձնանիշ այլ ուղեկցող բառեր: Օրինակ՝ գԳասպարն՝ Որովին փեսան, Միխնոյ՝ Վասքոյին թորն, Եագուպն՝ Պէնէշին դորն, Եագուպն՝ Փաղիսդային որդին, կինն Փիլիպին Ախսաբեթն, Գասպարին դստերն Մարուխնային:

Հաճախադեպ են որդի եւ կին/կնիկ հասարակ անուններով բացահայտվող անձնանունները, ինչպես՝ Օհանն՝ Վարդիֆին որդին, Յեօլպէին՝ Միխթարին որդուն եւ այլն⁴, այսպես նաեւ՝ Մանուշակն՝ Աստվատուրին

Երկան զպարտքն՝ Լ. (30) սոմ սպիտակ. որ էր գրած իմ տանն վերայ եւ ազատեց զիմ տունս:

⁴ Անուն-հայրանուն ազգակցական կապի այս արտահայտությունը միջին հայերենը ժառանգել է գրաբարից, որտեղ եւս այն զգալիորեն հաճախադեպ էր արտահայտված

կինն, Թուրաչ՝ Խաչոյին կինն, Սարգսին կինն Այիզոն, Նորսեսին կնոջն՝ Մառուխնային: Նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ Արձանագրություններում գերազանցապես արժարժվում են սեփականությանն առնչվող հարցեր, որոնք որոշ դեպքերում վերաբերում էին նաեւ սեփականատիրոջ կնոջը, որդուն կամ որդիներին⁵:

2.2. «(արական անձնանիշ հասարակ անուն (կամ դերանուն) + արական անձնանիշ հասարակ անուն) — արական անձնանուն», «(արական անձնանիշ հասարակ անուն (կամ դերանուն) + իգական անձնանիշ հասարակ անուն) — իգական անձնանուն», «(իգական անձնանիշ հասարակ անուն (կամ դերանուն) + արական անձնանիշ հասարակ անուն) — արական անձնանուն» կամ եւ «(իգական անձնանիշ հասարակ անուն (կամ դերանուն) + իգական անձնանիշ հասարակ անուն) — իգական անձնանուն»՝ մասնակաղապարներով, որոնցում, բացահայտյալի գործառույթով հանդես եկող հատկացուցիչ—հատկացյալ զույգի հատկացուցիչն անձնանվան փոխարեն արտահայտվում է անձնանիշ դերանունով, իսկ հատկացյալը՝ անձնանիշ հասարակ անունով: Օրինակ՝ քոջ դստերէն՝ Ոստեանայէն, իւրեանց եղբօրէն՝ Եագուպէն, զիւր եղբայրն զԱնտօնիկն, իմ քոյրիս՝ Սարային, իմ աղբարս՝ Ագսէնդն, իւր Երկան Վարդէտիսն, իւր կնկանն Մակտային, զմեր տղան՝ զՀորբիման, իւր կնկանն՝ Կոհարոյին, իւր այրն՝ Թորոսն, իմ այրս՝ Վարդէտն եւ այլն:

Արձանագրություններում հանդիպող բացահայտիչ—բացահայտյալ կապակցությունների բաղադրիչների միջեւ կիրառվում է դեռեւս գրաբարից ավանդված կապակցման եղանակը, այն է՝ համաձայնությունը, ինչպես՝ Եկաւ Գրիգորն եւ Վասիլն՝ Սարգիսին որդիքն եւ եղին առաջի դատաստանին զսպիտակն Գրիգորին՝ յԵօլպէյին որդոյ ի իւրեանց եղբօրէն՝

«արական անձնանուն — (որդի հասարակ անուն + արական անձնանուն)» բաղմաբաղադրիչ մասնակաղապարով, որտեղ բացահայտիչը համեմատաբար կայուն հատկացյալ—հատկացուցիչ կապակցությամբ է արտահայտված: Ահավասիկ օրինակներ Բուզանդից, Փարպեցուց, Խորենացուց եւ Նոր Կտակարանից. Յուսկանն որդոյ Վրթանիսի, Արտաւազ որդի Տիգրանայ, Աբգար որդի Արշամայ, Արշակ որդի Վաղարշակայ, Յեսու որդի Նաւայ, Պարոյ որդի Սկայորդոյ, առ Յակոբ որդին Իսահակայ եւ այլն: Նշված մասնակաղապարով գրաբարում եւս արտահայտվում են միջանձնային այլ կապեր նույնպես՝ Յագկերտ եղբայր Վտամայ ՂՓ, վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի, Վարդանդովստ կին թագաւորին, Փառանձեմ դուստր Անդովկայ, զՓառանձեմ կին Գնելոյ:

⁵ Անուն—հայրանուն ազգակցական կապը հատուկ է նաեւ լեհահայոց մեջ լայն տարածում գտած դիչադերենին, ինչի մասին վկայվում է հայատառ դիչադերենով մի գրություն մեջ՝ Միխնոյայ Տօնոյ օղլունայ, որը նույն արձանագրության մեջ (թիվ 28) ունի իր հայերեն համարժեքը՝ Եկաւ Միխնոն՝ Տոնուլի որդին ի դատաստանին առջեւն:

Եագուպէն վասն իւրեանց հայրենի տանն, այլեւ՝ Խանէշոյին վերայ իմ կնկանն, իմ կնոջս՝ Մարեննոյին, իմ պարունէն՝ Դադուլէն եւ այլն: Սակայն նկատելի է, որ ուղղականով արտահայտված բացահայտիչ—բացահայտյալ զուգն առկայացման քերականական կարգով ոչ միշտ է համաձայնում: Հմմտ. Կուրեղին կինն՝ Մարութնան եւ Անտրուխին կինն՝ Բեթասենեայ: Պատճառն այն է, որ լեհահայոց խոսվածքում ենթակայի գործառույթ կատարող անձնանունները հանդես են գալիս ոչ միայն որոշյալ, այլեւ անորոշ առմամբ, ինչպես հետեւյալ օրինակներում՝ Ճաշխաթուն՝ տէր Հանէսին կինն սեշովցի//Ճաշխաթուն՝ տէր Հանէսին կինն սեշովցի: Հմմտ. նաեւ Եկաւ Իւրո, եկաւ Խաչո՝ Շիմքոյին թորն, եկաւ Սարգիս Դաւքոյին, զի Պովաղանով եկաւ Խաչքոյին վերայ, եկաւ Աւաք Մադէյին եւ Եկաւ Խաչոն Շիմքոյին, եկաւ Գոսդան, եկաւ Ասվատուրն տէր Պետրոսին, եկաւ նոյն Վոգնիցան՝ վիրաւորացն՝ վիրաւորեալն:

Անհամաձայնություն է առկա նաեւ բացահայտիչ—բացահայտյալ այն զուգների միջեւ, որոնց ոչ թե բացահայտյալ եզրն է արտահայտված հատկացուցիչ+հատկացյալ համեմատաբար կայուն կապակցությամբ, այլ բացահայտիչ եզրը, որն այստեղ մշտապես արտահայտվում է անձնանուն հատկացուցիչ + որդի բառի սեռական հոլով հատկացյալ քերականական կապով: Վերջին բաղադրիչը, այսինքն՝ բացահայտիչը, բացահայտյալի հետ կապակցվում է համաձայնության եղանակով: Օրինակ՝ Գրիգորն տէր Պետրոսին որդին եւ Հարպետն՝ Գոսդային որդին, Վասոն՝ Միշոյին որդին, տվել էին Գրիգորին տէր Պետրոսին որդոյ, Հօլուպին Քարուշին որդոյ բարութեան եւ տանն վերայ, Անտրիսին տունն՝ Հաբար իրիցոյ որդոյ եւ այլն:

Երբեմն բացահայտիչ—բացահայտյալ զուգն ընդմիջարկվում է նախադասության այլ անդամներով, ինչը չի խաթարում նրանց համաձայնական կապը: Օրինակ՝ Անտրիսին տունն՝ Հաբար իրիցոյ որդոյ, զՄիլոն. որ է որդի Եագուպին. զերդուած դատաւորն: Եւ այդ եկտանան իւր հարսին գլուխն էր՝ Ազիգոնին, զի երթեալ տացեն ուվեազանեայ Ագսնդին բաժնին վերայ Գոսդային որդոյ եւ այլն:

Նմանատիպ կառուցներում կապական կապակցությամբ արտահայտված բացահայտյալի՝ կապով հանդես եկող բաղադրիչը բացահայտչի կազմում սովորաբար չի կրկնվում, ինչպես՝ Յովանէսին վերայ Սիմոնին որդոյ, Նորսէսին վերայ՝ Գրիգոր երեսփոխանի որդոյ: Հազվադեպ են այն կապակցությունները, որոնցում կապական կապակցությամբ են արտահայտված թե՛ բացահայտյալը եւ թե՛ բացահայտիչը՝ Ուստի այժմ Բ.

(2)-ուժն այլ միաբանեցան եւ տրվեցան վկայներոյ վերայ. այսինքն է հաշէրէսին Ահրոնին վերայ եւ Ֆիտրիխին վերայ գրաքուլցոյ: Հատկանշական է, որ հետադաս կապով ձեւավորված բացահայտիչ—բացահայտյալ զուգից կապով գերազանցապէս արտահայտվում է բացահայտյալը⁶, իսկ հայտնի վերայ Գրիգորէցին կնկանն, Նազուին վերայ Ջիֆային կնկանն, Տօնիկին վերայ Վարդէշուրին փեսին եւ այլն: Օրինակ՝ Ի յայս աւուր դատաստանին առջեւն եկաւ Եօլպէյն խախաթունին եւ գանկատ առաւ իսախոյին վերայ Հանոսքային որդոյ: Սակայն հանդիպում են նաեւ զուգեր, որոնցում կապական կապակցութեամբ արտահայտված է բացահայտիչը, ինչը բնորոշ է միջին հայերենին՝ իւր որդոյ Վարդէրէսին վերայ, իւր աներձագին՝ Ոհաննին յետ, Յովաննէս Փախմոյին որդուն վրայ, Հարպետին՝ Գոսդային որդոյ համար, իւր աներձագին՝ Անտրիխին վերայ, Եագուպին՝ Զափիլիին որդոյ վերայ եւ այլն, եւ ժառանգել է նաեւ ժամանակակից հայերենը:

Բացահայտիչ—բացահայտյալի անհամաձայնությունն է նկատվում դիմորոշության տեսանկյունից. առաջին դեմքով արտահայտված բացահայտյալի հետ կապակցված բացահայտիչը հանդես է գալիս ոչ թե ս դիմորոշ հոգով, այլ ն հոգով, իսկ երբեմն էլ արտահայտվում է առանց հոգի: Հմմտ. ես՝ Անտրէյս, ես՝ Գրիգորս, ես՝ Ագաւնդս եւ ես՝ Ոհանն, ես՝ Ասվատուրն, ես՝ Վիտիւմանն, ես՝ Յովհաննէս:

Նկատենք, որ իգական անուններ գերազանցապէս հանդիպում են բացահայտիչ—բացահայտյալ կապակցությունների մեջ⁷:

Նախադասության անդամներից բացի՝ անձնանունների բնութագրումն ու բացահայտումը կարող են տեղի ունենալ նաեւ բարդ կառուցյունների, համապատասխանաբար, որոշիչ եւ բացահայտիչ երկրորդական նախադասությունների միջոցով: Օրինակ՝ Տիրատուրին. որ կոչի Բադրար⁸: Օբաթրօնայ Մարդայ, որ է կին Գրիգոր խրափաչին, զՏիրատուրն, որ է էտիլին այր, Ի Իւրքոյէն, որ է որդի Գովալ Հրիհորին, Կրիկէր. որ է շաֆար քաֆօվի Եանտրիս Վուկուպետրին, Դադոզն, որ է Մա-

⁶ Նախադաս կապով բացառապէս արտահայտվում է բացահայտյալը, ինչպէս յետ իր կնկանն՝ Մակտային:

⁷ Արական անունների եւ դրանք կրողների հայրանունների՝ հատկացուցիչ—հատկացյալ եւ որոշիչ—որոշյալ կապակցություններն իգական անունների դեպքում հազվադեպ են՝ Նագուն տէր Հանէսին, Հաննայ ըռուզ: Իգական անձնանունների բացահայտումը կատարվում է նաեւ բացահայտիչ երկրորդական նախադասությունների միջոցով, ինչպէս՝ Վարդէ. որ է կինն իւովի Անտրէյին: Ուլուխաթունն, որ է կինն Գրիգորին: Շէնֆոն. որ է կին Գասպարին: Նագուն. որ է կինն Գրիգոր Ջիֆային: Օբաթրօնայ Մարդայ, որ է կին Գրիգոր խրափաչին:

⁸ Կարծում ենք՝ պատարար, այսինքն՝ պատղիր՝ պատշար բառն է:

բուխնային փեսան, Սարգուլայէն, որ է Սուվինիչին դոռն, Մանա. որ է ֆոյր տէր Պետրոսին⁹: Նկատենք, որ արձանագրություններում հաճախադեպ են բացահայտիչ երկրորդական նախադասութեամբ կառուցները. դա պայմանավորված է նրանով, որ դատարանի քարտուղարը սովորություն ունի գլխավոր նախադասութեան բացահայտչալի ով լինելը ներկայացնել միջանձնային հարաբերությունների դաշտում, որտեղ երկրորդական նախադասությունների ստորոգյալը գերազանցապես ունի բաղադրյալ կազմութիւն:

Նայած խոսքային իրավիճակին՝ բացահայտիչ—բացահայտչալ կապակցութիւնը, պարտադիր բաղադրիչներից բացի, կարող է հանդես գալ մի շարք ուղեկցող բառերով, այսինքն՝ ոչ պարտադիր բառաքերականական միավորներով համալրված՝ որոշիչ—որոշչալ, որոշիչ—հատկացուցիչ—հատկացչալ եւ այլ ծավալումներով: Հմմտ. Փիլիպ՝ Սամուկային փեսան եւ Փիլիպ ֆամէնցի՝ Սամուկային փեսան, այսպես նաեւ՝ իւր ֆրոջ դստերէն՝ Ուսդեանայէն, Յովհաննէս՝ Կուզ իրիցոյ որդին, Գրիգորին՝ տէր Պետրոսին որդոյ, Անդոն ըռուզ՝ Միսոնի որդին կոջֆարին, Ոհանն՝ իլովցի Խոնիկին որդին, Գաբուս իլովցի՝ որդի տէր Նիկօլին, Ծառուկն հայ՝ Մանուկին թորն կամինցի եւ այլն:

Եզրակացություն

Կամենիցի հայկական դատարանում 1559—1775 թթ. գրառված շուրջ 370 արձանագրութիւններում անձնանունների գործածութեանը վերաբերող ոճական, հնչյունական, կառուցվածքային, կապակցական եւ շարահասական մոտեցումները գերազանցապես անմիօրինակ են թե՛ քերականական ձեւավորվածութեան, թե՛ հնչյունային կազմի եւ թե՛ շարահասութեան տեսանկյուններից: Այսուհանդերձ, նկատելի են որոշ առանձնահատկութիւններ, որոնք բնորոշ են Առդեալի (Տրանսիլվանիայի) կամ ծայր հյուսիսարեւմտյան միջբարբառախմբի լեհահայոց խոսվածքին, մասնավորապես՝ կամենիցահայութեան լեզվին:

1. Արձանագրութիւններում անձնանունները հազվադեպ են միայնակ գործածվում: Անհամեմատ հաճախադեպ են բաղադրյալ

⁹ Կարծում ենք՝ նշված ժամանակահատվածում որ էն ոչ թե երկրորդական նախադասութիւնն է կապում գլխավորին, այլ բացահայտչալը՝ բացահայտչին՝ «այսինքն/այն է» նշանակութեամբ: Հմմտ. Ուստի այժմ եկն սօտուշն՝ այսինքն է Սեմեոն:

եւ բազմաբաղադրյալ կապակցություններում գործածված անձնանունները, լինելով առարկա ցույց տվող բառեր՝ նրանք սերտորեն կապակցվում են ե՛ւ այլ անձնանունների, ե՛ւ մարդկային հարաբերություն (մասնավորապես ազգակցական կապ) ու հատկանիշ ցույց տվող ուղեկցող բառերի հետ՝ հանդես գալով որոշիչ—որոշյալ, հատկացուցիչ—հատկացյալ եւ բացահայտիչ—բացահայտյալ քերականական հարաբերություններում:

2. Կարելոր միջոց է ծառայում հատկացուցիչ—հատկացյալ քերականական զույգը, որով գերազանցապես արտահայտվում է հայր—որդի հարաբերություն՝ արձանագրություններում ամենաշատ հանդիպող ազգակցական կապը՝ հիմնականում առական անձնանուն հատկացյալ — հայրանուն հատկացուցիչ շարադասությամբ: Կարծում ենք՝ նյութի շարադրանքը գրաբարին բնորոշ նշված շարադասությամբ արձանագրելով՝ դատարանի քարտուղարը փորձում է այդ հնարքով դատական վավերաթղթերում կիրառել պաշտոնական ոճ, որը կարող է պայմանավորված լինել տվյալ ժամանակաշրջանում լեհական դատական համակարգում ձեւավորված որոշ ավանդույթների ներգրմամբ նույնպես:

3. Թե՛ միայնակ, թե՛ բաղադրյալ ու բազմաբաղադրյալ կապակցություններում ակնհայտորեն հաճախագեպ են արական սեռի անձնանունները, մասնավորապես՝ հայրանունները, ինչը, անշուշտ, հայրիշխանության արտահայտություններից մեկն է: Որեւէ անձի հիշատակելու համար բաղադրյալ կապակցություններում գործածվում են ոչ միայն արական անձնանուններ (առական անձնանուն—հայրանուն), այլեւ արական անձնանուններ ու «տվյալ ընտանիքի ժառանգ» նշանակող ուղեկցող բառեր (անկախ սեռից)՝ դուստր, աղջիկ, թոռ, տղա (=երեխա), որոնցից լայնորեն կիրառվում է որդի ուղեկցող բառով արտահայտված եռանդամ կապակցությունը (առական անձնանուն — որդի — հայրանուն):

4. Վերոբերյալ դիտարկմանը հակառակ՝ սահմանափակություն է նկատվում իգական անձնանունների եւ նրանցով կազմված երկանդամ բաղադրյալ կապակցությունների առումով: Իգական անձնանունները հիմնականում գործածվում են բացահայտիչ—բացահայտյալ կապակցություններում:

5. Շրջանառվում են պատվանուն նշանակող ուղեկցող բառեր, որոնք գաղթավայրում կատարված փոխառություններ են լեհերենից (բան, բանի) եւ եւրոպական այլ երկրներից (պարոն), ունեն ան-

կանոն եւ սահմանափակ կիրառություն, եւ որոնցով սկսում են հիշատակվել նաեւ լեհահայեր: Սլավոնական լեզուների ազդեցության հետեւանք են նաեւ լեհահայերի միջավայրում հազվադեպ անուն-հայրանուն փոխառյալ կապակցությունները, որոնք սկսում են գործածվել լեհահայոց խոսվածքին բնորոշ կապակցություններին զուգահեռ: Դրանք փաստական վկայություններ են լեհահայերի առնվազն երեք սերունդների՝ անվանակոչության հարցում հանդես բերած նոր մոտեցումների, որոնց հետեւանքով հետագայում սահմանափակվում, ապա դադարում է հայկական անձնանունների՝ միայնակ կամ բաղադրյալ կապակցություններում շրջանառությունը:

6. Տեղաբնակներին (դրանք գերազանցապես լեհեր են, մասամբ՝ ուկրաինացիներ) հիշատակող անձնանունների եւ ուղեկցող բառերի գործածության հետ կապված՝ նկատելի է, որ՝

6.1. Ավելի հաճախ հիշատակվում են անուն-հայրանունով՝ Եւրֆո Պրիսիպի, Իւրֆո, Մոշիմսի, Ամարի Նեզապիթովսի, Ամարուշո Բրուչենեա, Բանֆո Մէլշո, Եան Միդրորկա, Եան Մնիխովը, Իւֆոյ Վարդման, Հրիցֆո Քլիմովիչ եւ այլն:

6.2. Բաղադրյալ կապակցություններում տիտղոս, տեղանվան բացառական կամ տեղանվանահիմք բառ, զբաղմունք (եւ այլն) արտահայտող ուղեկցող բառեր ավելի հաճախ են գործածվում, քան լեհահայերին հիշատակելիս, ինչպես՝ շլախեդնի Վալերիոմ Բոտովսի, Պաշոն նեմիշ, Բրոֆոն Զուպրովցանէն, ծառա Բուտովսի, Վոյթովսի եւ Քամոցի իլախներ, ընդդէմ Բրոցիֆ եւ այլն:

6.3. Միայնակ հիշատակվում են ազգանունով, քան անունով: Հմմտ. Քարափշովսի, Վոյթովսի, Քամոցի, Ռաֆովսի, Լիվինսի, Զալեսի¹⁰, Միլեւսի/Միլեսի, Ռաժիշովսիին մոտ, Շարովսի, Վիդալովցի եւ Իւրֆո, Բեդր, Պաւա, Իւան եւ այլն: Մինչդեռ ընդունված չէ լահահայերին հիշատակել միայն հայրանունով՝ առանց անձնանունի:

6.4. Գործածվում են նաեւ բացահայտիչ-բացահայտյալ կապակցությամբ, ինչպես՝Վեւսի, որ է ծառա բան Մոշիմսիին:Քարափշովսիին ծառայքն. անուամբ որք կոչին Վոյթովսիի եւ Քամոցի իլախներ: Եկաւ Ա. (1) իլախ մարդմ. որ է Վոզնիան: Եկաւ Իւրքո, որ է փիսար¹¹

¹⁰ Հմմտ. Զլիսի:

¹¹ Լեհ.՝ «գրագիր»:

*Ֆիտրիխ Սմալցին.... Իւրքո, որ է շաֆար¹² Ֆիտրիխ Սմալցինի քրաքով-
ցոյ: Եկաւ Վուխսովցայէն Անտրիյ Պուքովսքիյ, որ է մարդ Բողոցքիյ
բաւն Ենտրիյին:*

Համառոտագրություններ

prf. — թուրքերեն, լեհ. — լեհերեն, հյ. — հայերեն, ղփշ. — ղփշաղերեն,
պրսկ. — պարսկերեն

РЕЗЮМЕ

Стилистические, фонетические, структурные, словообразовательные и синтаксические принципы употребления личных имен в сохранившихся 370 протоколах армянского суда города Камениц (современный: Каменец-Подольский), записанных на протяжении 1559—1775 гг., в большинстве своем отличаются отсутствием единообразия с точки зрения как грамматического оформления и фонетического состава, так и синтаксического строя. Тем не менее, заметны определенные особенности, свойственные ардеальскому (Трансильвания) или крайнему северо-западному междialeктному говору польских армян, в частности языку каменицких армян.

В протоколах личные имена редко употребляются изолированно. Значительно чаще личные имена применяются в составных и многосоставных сочетаниях и тесно связываются с другими личными именами и со словами, указывающими на отношения между людьми (в частности, на родство) и на те или иные признаки, вступая при этом в следующие грамматические отношения: определение-определяемое, несогласованное определение-несогласованное определяемое, приложение-аппозитивное определяемое.

Важным средством является грамматическая пара несогласованное определение-несогласованное определяемое, с помощью которой выражается преимущественно отношение отец-сын — самая распространенная родственная связь. При этом, в основном, используется следующая синтаксическая конструкция: мужское личное имя несогласованное определяемое — отчество несогласованное определение; данная конструкция перешла в среднеармянский язык из древнеармянского. Секретарь суда пытался подобным образом приме-

¹² Լեհ.՝ «մառնանալետ», «տնտես»: Հմմտ. Ի հետ Իւրքոյ Պրիքսքիյին, որ է շաֆար պարուն Ֆիտրիյին:

нить в судебных документах официальный стиль, что могло быть обусловлено также внедрением некоторых традиций, сформированных в польской судебной системе данной эпохи.

В судебных протоколах часто встречаются мужские личные имена, в частности отчества, что, безусловно, является одним из выражений патриархальных отношений. Для упоминания того или иного лица в составных сочетаниях употреблялись не только мужские личные имена (мужское личное имя-отчество), но и мужские личные имена и сопутствующие слова со значением «наследник данной семьи» (независимо от пола): дочь, девочка, внук, мальчик; широко употреблялись трехчленные сочетания, выраженные сопутствующим словом сын (мужское личное имя-сын-отчество). Обратная картина наблюдается в применении женских имен и в образованных с их участием двучленных составных сочетаниях. Женские личные имена, в основном, употребляются в сочетаниях приложение — аппозитивное определяемое.

В судебных протоколах применялись также сопутствующие слова, имеющие статус вежливого обращения, которые являлись заимствованиями из польского языка (пан, пани) и из других европейских языков (парон): они имели ограниченное употребление, причем этими словами обращались не только к полякам, но и к представителям польско-армянской диаспоры. Под воздействием славянских языков формируется заимствованное сочетание имя-отчество, редкое для польских армян, которое начинает употребляться параллельно с сочетаниями, характерными для польско-армянского говора. Вышесказанное является документальным свидетельством того, что новые подходы в вопросах имяна-речения и обращения к лицам у как минимум трех поколений польских армян привели к дальнейшему ограничению, а затем и к полному вытеснению армянских личных имен как в изолированной форме, так и в составных сочетаниях.

SUMMARY

Stylistic, phonetic, structural, derivational and syntactic principles of the use of personal names in the preserved 370 Armenian court records of the city of Kamenets (modern - Kamenets-Podolsky in Ukraine), documented during the years from 1559 to 1775, are mostly characterized by a lack of uniformity in terms of their grammatical form, phonetic composition and syntactic structure. However, certain features are noticeable, which are inherent in Ardeal (Transylvania) or far north-western inter-di-

alectal speech of the Polish Armenians, and particularly, in the language of the Armenians living in Kamenets.

In records, personal names are rarely used separately. Much more often personal names are used in compound and multi-component combinations, which are closely associated with other personal names and with words indicating relations between people (in particular, kinship) and accompany attributes expressing the following grammatical relations: attribute and its head, *premodifier and its head*, apposition and appositive.

The grammatical pair of premodifier and its head is considered as essential means, helping to express mainly the father-son relationship, i.e. the most common kinship. In this case, the following syntactic construction is mainly used: *male personal name as a head and patronymic as a premodifier*. This phenomenon was transferred to the Middle Armenian language from the Ancient Armenian one. The clerk tried to apply the official style in court documents in a similar way, which could also be due to the introduction of some traditions formed in the Polish judicial system of this era.

In court records, male personal names, in particular, patronymics are often found which, undoubtedly, express patriarchal relations. To mention a particular person in compound combinations, not only male personal names (*male personal name-patronymic*) were used, but also male personal names and accompanying words meaning “heir to this family” (regardless of gender): *daughter, girl, grandson, boy*. Three-component combinations, expressed by the accompanying word son (*male personal name-son-patronymic*) were widely used. The opposite picture is observed in the use of female names and in the two-component word combinations. Women’s personal names are mainly used in the *apposition- appositive* relation.

In court records, accompanying words were also used that had the status of polite treatment, which were borrowings from the Polish language (*pan, pani*) and from other European languages (*paron*). They had a limited use, and these words were addressed not only to Poles, but also to representatives of the Polish-Armenian Diaspora. Under the influence of the Slavic languages, a borrowed *name-patronymic* combination, rarely used by Polish Armenians, started being practiced in parallel with the phrases typical of the Polish-Armenian dialect. The above-mentioned phenomena are considered as documentary evidence for new approaches to naming and addressing people of at least three Polish Armenian generations, which led to a further restriction and later to a complete absence in using Armenian personal names both in single-component form and in compound combinations.